

Մ Ա Ս II

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

ՄԱՍ II-Ա

Մակրոտնտեսական կանխատեսումներ և վերլուծություն

3.1 Ներածություն

Տարեկան բյուջետային ծրագրի այս հատվածը ներկայացնում է ընթացիկ տնտեսական իրավիճակը հանրապետությունում, ինչպես նաև 2011 թվականի մակրոտնտեսական հեռանկարները:

Տնտեսական կանխատեսումների նպատակը

Հայաստանի տնտեսության իրավիճակի կանխատեսումները կարևոր են մի քանի պատճառներով: Նախ՝ տնտեսական աճ ապահովող արդյունավետ տնտեսության առկայությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիների եկամուտների ավելացումը ինքնին շատ կարևոր նպատակ են Հայաստանի Հանրապետության կառավարության համար: Այդ նպատակները նաև Կառավարության Գործունեության Ծրագրի բաղադրիչներն են: Մակրոտնտեսական կանխատեսումները ոչ միայն տեղեկատվություն են տալիս, թե որքանով են վերը նշված նպատակները իրագործվելու, այլ նաև ապահովում են ընդհանուր տնտեսական միջավայրի վերաբերյալ պատկերացումներ, ինչը կարևոր է կառավարության ռազմավարության և քաղաքականության այլ ասպեկտների ձևավորման համար: Այլ կերպ ասած մակրոտնտեսական կանխատեսումները հիմք են տալիս պատկերացում ունենալ այն իրական միջավայրի մասին, որի պայմաններում գործելու է կառավարությունը: Ընդ որում, մակրոտնտեսական ապագա զարգացումների համատեքստում է ուրվագծվում կառավարության քաղաքականության հակացիկլիկ բնույթը: Ընդունված կանոն է, որ տնտեսական անկումների ժամանակ հարկաբյուջետային քաղաքականությունը պետք է լինի ընդլայնող՝ պակասուրդի մեծացման միջոցով ավելի շատ ծախսերի իրականացում քան եկամուտների հավաքագրում և հակառակ վարքագիծը՝ տնտեսական վերելքների ժամանակահատվածում:

Տնտեսական կանխատեսումների իրականացման երկրորդ կարևոր հիմնավորումն այն է, որ ազգային տնտեսության իրավիճակը մեծ ազդեցություն ունի կառավարության ֆինանսական ռեսուրսների վրա: Տնտեսական բարձր աճն ապահովում է գործարարների ավելի մեծ

եկամուտներ, որոնք իրենց հերթին կառավարության համար ապահովում են ավելի մեծ հարկային եկամուտներ: Եվ հակառակը, տնտեսական աճի ցածր մակարդակը բերում է հարկերի ավելի ցածր մակարդակի և կառավարության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության և օժանդակության ավելի մեծ պահանջարկի: Մակրոտնտեսական կանխատեսումները նաև հիմք են հանդիսանում ապագայում բյուջեի վրա հնարավոր ծանրաբեռնվածության մեծացման հետ կապված ռիսկերի գնահատման համար:

Տնտեսության նկարագրություն

Տնտեսությունը կարելի է նկարագրել հետևյալ վեց հիմնական բնութագրիչներով.

- Համախառն առաջարկ (չափվում է, տնտեսության առանձին ձյուղերում ստեղծված ավելացված արժեքներով, իսկ վերջիններիս իրական աճերը բնութագրում են համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) իրական աճը),
- Համախառն պահանջարկ (չափվում է, պետական, մասնավոր հատվածների և արտաքին աշխարհի կողմից ապրանքների և ծառայությունների վրա կատարվող ծախսումներով, սպառում/ՀՆԱ, ներդրում/ՀՆԱ, զուտ արտահանում/ՀՆԱ),
- Գնային փոփոխականներ (ՀՆԱ դեֆլյատոր, որն իրենից ներկայացնում է տնտեսությունում ստեղծված ՀՆԱ-ի գների փոփոխությունը և գնաձ, որը չափվում է սպառողական գների (ներառյալ սպառողական ներմուծված ապրանքների գները) ինդեքսի փոփոխությամբ (ՍԳԻ)),
- Ֆինանսական համակարգի խորություն (չափվում է հետևյալ փոփոխականներով՝ Փողի ագրեգատներ/ՀՆԱ, վարկեր/ՀՆԱ, ավանդներ/ՀՆԱ, ցույց է տալիս թե բանկային համակարգը որքանով է ներգրավված երկրի տնտեսական կյանքում),
- Արտաքին աշխարհի հետ տնտեսական հարաբերություններ (չափվում է հիմնականում երկրի ընթացիկ հաշվի հաշվեկշռով և դրա տարրերով՝ արտահանում, ներմուծում, տրանսֆերտներ, գործոնային եկամուտներ),
- Պետական հատվածի դիրքը տնտեսությունում (չափվում է հիմնականում պետական հատվածի ծախսերի, եկամուտների ծավալով և դրանց տարբերությամբ, պետական ծախսեր/ՀՆԱ, հարկային եկամուտներ/ՀՆԱ, պակասուրդ (հավելուրդ)/ՀՆԱ):

Աղյուսակ 3.1-ում ներկայացված է տնտեսության ներկա իրավիճակի հակիրճ նկարագրությունը՝ ըստ վերը նշված վեց գլխավոր տնտեսական բնութագրիչների: ՀՀ կառավարության բյուջետային ուղերձի այս հատվածում նկարագրված են նաև այն հիմնական գործոններն ու միտումները, որոնք պայմանավորում են աղյուսակ 3.1-ում նշված ցուցանիշերը և տնտեսության զարգացման հեռանկարները:

Աղյուսակ 3.1 ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի հիմքում դրված հիմնական տնտեսական չափորոշիչներ

Չափորոշիչ	2007	2008	2009	2010	2011	2012
	Փաստացի	Փաստացի	Փաստացի	Փաստացի	Սպասում	Կանխատեսում
Տնտեսական աճ (ՀՆԱ % փոփոխություն)	13.7	6.9	-14.1	2.1	4.6	4.2
Ներդրումների մակարդակ (Ներդրում/ՀՆԱ %)	37.8	40.9	34.7	33.4	31.3	30.0
Սպառման մակարդակ (Սպառում/ՀՆԱ %)	81.8	81.8	93.7	94.0	91.2	89.3
ՀՆԱ դեֆլյատոր	104.2	105.9	102.6	109.2	105.7	104.6
Գնաճ միջին	4.4	9.0	3.4	8.2	7.7	4.5
Գնաճ 12-ամսյա	6.6	5.2	6.5	9.4	4.6	4.1
Պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ %	-0.7	-0.7	-7.7	-3.3	-3.8	-3.1
Բանկային համակարգի ներգրավվածություն (փողի գանգված/ՀՆԱ %)	22	19.8	25.9	26.03	27.1	27.5
Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ %	-6.4	-11.8	-15.8	-14.7	-11.1	-9.8

3.2 Համախառն առաջարկ

Ինչպես արդեն նշել ենք, երկրում համախառն առաջարկն չափվում է տնտեսության առանձին ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների հանրագումարով, որի իրական արտահայտությամբ փոփոխությունն էլ նախորդ տարվա համեմատ գնահատվում է ՀՆԱ-ի իրական աճի միջոցով: Ուստի այս բաժնում կներկայացվի տնտեսության հիմնական ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների փոփոխության դինամիկան վերջին տարիներին և ապագա ակնկալվող զարգացումները:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

Մինչ 2009 թվականը Հայաստանի տնտեսությունը բնութագրվել է տնտեսական աճի բարձր ցուցանիշներով, մասնավորապես՝ 2006-2008 թվականներին միջինում գրանցվել է 11.3 տոկոս համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) իրական աճ: 2006-2008 թվականների տնտեսական աճին հիմնականում նպաստել են շինարարությունը՝ միջինում 4.8 և ծառայությունները՝ միջինում 3.5 տոկոսային կետերով: Համաշխարհային ֆինանսական ճգնաժամից հետո թեև տնտեսական աճի տեմպերը զիջում են մինչճգնաժամային աճի տեմպերին, սակայն երկրի

տնտեսական աճի կառուցվածքում տեղի ունեցան որակական տեղաշարժեր ի օգուտ ավելի արտադրողական ճյուղերի, որի պարագայում աճին նպաստող առաջնորդող ճյուղ սկսեց հանդես գալ արդեն արդյունաբերությունը:

2010 թվականին ՀՆԱ-ն՝ իրական արտահայտությամբ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճեց 2.1 տոկոսով: Ընդ որում, տնտեսական վերականգնման վրա դրական անդրադարձավ ինչպես կառավարության հակաճգնաժամային փաթեթի ազդեցությունը, այնպես էլ արտաքին բարենպաստ միջավայրը՝ ի դեմս մետաղների բարձր գների և գործընկեր երկրների տնտեսությունների վերականգնման: 2010 թվականին աճ է արձանագրվել տնտեսության բոլոր ճյուղերում՝ բացառությամբ գյուղատնտեսության¹: Նշված ժամանակահատվածում ծառայությունների հաշվին ապահովվել է տնտեսական աճի 1.8 տոկոսային կետը, իսկ իրական աճը կազմել է 4.5 տոկոս, արդյունաբերության հաշվին ապահովվել է տնտեսական աճի 1.4 տոկոսային կետը՝ 10.5 տոկոս իրական աճի պայմաններում: Շինարարությունը ևս աճել է 3 տոկոսով, 0.6 տոկոսային կետով դրական նպաստում ունենալով տնտեսական աճին: Պայմանավորված անբարենպաստ բնակլիմայական պայմաններով գյուղատնտեսությունը նվազել է 15.7 տոկոսով՝ 2.7 տոկոսային կետով բացասական նպաստում ունենալով տնտեսական աճին:

Շարունակելով 2010թ.-ի տնտեսական վերականգնման միտումը, 2011 թվականի հունվար-հուլիսին գրանցվել է տնտեսական ակտիվության ցուցանիշի (SԱՑ)² աճ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ցուցանիշն աճել է 5.0 տոկոսով: Ընդ որում, տնտեսական ակտիվությանը նպաստել են բոլոր ճյուղերը՝ բացառությամբ շինարարության, իսկ ամենամեծ նպաստումն են ունեցել ծառայությունների, գյուղատնտեսության (յուրաքանչյուրը 2.4 տոկոսային կետ³) և արդյունաբերության (2.3 տոկոսային կետ) ճյուղերի համախառն թողարկումների իրական աճերը: Դրական է նաև առևտրի նպաստումը տնտեսական ակտիվությանը՝ 0.7 տոկոսային կետ, իսկ շինարարության բացասական նպաստումը կազմել է 2.8 տոկոսային կետ: Պետք է նշել նաև, որ գյուղատնտեսության ճյուղի արագ վերականգնումն

¹ Մուլայն պարբերության ցուցանիշները վերաբերում են տնտեսության ճյուղերում ստեղծված ավելացված արժեքին:

² 2011 թվականից ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը ամսական ՀՆԱ-ից անցում է կատարել SԱՑ-ի հաշվարկմանը: Ի տարբերություն Ազգային հաշվիներին մեթոդաբանության ամբողջական հաշվարկվող ՀՆԱ ցուցանիշի (որն ունի եռամսյակային և տարեկան պարբերականություն) ամսական SԱՑ-ը բնութագրում է տնտեսությունում ամսական արտադրանքի և ծառայությունների թողարկման ծավալների փոփոխությունը, այլ ոչ թե ավելացված արժեքի փոփոխությունը: Բացի այդ, ամսական SԱՑ-ը չի ընդգրկում արտադրանքի գուտ հարկերը և ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունները (ՖՄԱԶԾ), որոնք ներառվում են եռամսյակային և տարեկան ՀՆԱ-ի արտադրական եղանակով հաշվարկներում:

³ SԱՑ-ի աճին ճյուղերի նպաստումները ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականներն են:


արդյունք էր նաև կառավարության կողմից ձեռնարկված գյուղատնտեսության առաջարկին օժանդակող մի շարք ծրագրերի արագ իրագործման:

Կանխատեսում: 2011 թվականի յոթ ամիսների դրական զարգացումները և համաշխարհային տնտեսությունում աճի կանխատեսումները հիմք են հանդիսացել 2011 թվականի տնտեսական աճի տեմպի (4.6 տոկոս) կանխատեսման համար: Մետաղների միջազգային գներն ակնկալվում է, որ 2011թ.-ի մինչ սեպտեմբերը նվազման ուղղությամբ որոշակի ճշգրտումից հետո կկայունանան 2012 թ.-ի ընթացքում, սակայն գների միջին մակարդակը կզիջի 2011թ.-ի մակարդակին: Ակնկալվում է, որ կշարունակեն աճել նաև արտերկրից եկող դրամական փոխանցումները՝ պայմանավորված հիմնականում Ռուսաստանի տնտեսության ակնկալվող դրական զարգացումներով՝ թեև մասնավոր փոխանցումների աճի տեմպերում ևս որոշակի դանդաղում է սպասվում, կապված 2012թ.-ին նախորդ տարվա համեմատությամբ Ռուսաստանի տնտեսական աճի ակնկալվող տեմպերի փոքր ինչ դանդաղմամբ: Արդյունքում, 2012 թվականի համար իրական ՀՆԱ-ի աճը կանխատեսվում է փոքր ինչ ցածր՝ 2011թ-ի համեմատությամբ, 4.2 տոկոսի չափով, որին հիմնականում կնպաստեն ծառայությունների և արդյունաբերության ճյուղերի աճերը:

Աղյուսակ 3.2.1. Տնտեսության ճյուղերի իրական աճերը 2006-2012թթ. (ավելացված արժեքով)

	2006	2007	2008	2009	2010	2011	2012
	փաստ.	փաստ.	փաստ.	փաստ.	փաստ.	ծրագ.	կանխ.
Արդյունաբերություն	-2.5	2.8	2.1	-6.9	10.5	11.5	7.5
Գյուղատնտեսություն	0.5	10.4	3.3	6.0	-15.7	9.2	4.0
Շինարարություն	37.7	18.2	11.3	-41.6	3.0	-4.0	2.5
Ծառայություններ	16.0	12.5	4.8	-3.3	4.5	4.0	3.5
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)	14.9	35.9	17.1	-22.5	9.2	3.3	4.0
Ընդամենը ՀՆԱ	13.2	13.7	6.9	-14.1	2.1	4.6	4.2

Գծապատկեր 3.2.1-ում ներկայացված են տնտեսության առանձին ճյուղերում արձանագրված և կանխատեսվող ՀՆԱ-ի իրական աճին նպաստման չափերը:



3.2.1 Արդյունաբերություն⁴

Աղյուսակ 3.2.1-ից նկատելի է, որ 2006-2008 թվականների արդյունաբերության ճյուղի իրական աճի ցուցանիշն ամենացածրն է եղել և ճյուղում միջին հաշվով գրանցվել է 0.8 տոկոս աճ, ինչը բացատրվում է հիմնականում այդ տարիներին արդյունաբերության որոշ ենթաճյուղերի համար (բացառությամբ մետալուրգիայի) անբարենպաստ գնային դաշտի ձևավորմամբ՝ ի դեմս արժևորվող իրական փոխարժեքի, ինչպես նաև այս ոլորտում իրականացվող ոչ բավարար ներդրումների: Պատկերը փոխվեց ճգնաժամից հետո, 2009 թվականի սկզբին ճյուղը զգալի անկումից հետո տարվա երկրորդ կեսին՝ միջազգային շուկայում մետաղների գների աճի և կառավարության համակարգված հակացիկլային քաղաքականության արդյունքում, աստիճանաբար վերականգնվել է: 2010 թվականին աճի միտումը պահպանվեց և ճյուղում արձանագրվեց ավելացված արժեքի 10.5 տոկոս իրական աճ:

2011 թվականի հունվար-հուլիս ամիսներին արձանագրվել է արդյունաբերական արտադրանքի համախառն թողարկման ծավալների 12.4 տոկոս աճ: «Հանքագործական արդյունաբերության», «Մշակող արդյունաբերության», «Էլեկտրաէներգիայի, գազի, գուլորշու և լավորակ օդի մատակարարում» և «Զրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաճյուղերի թողարկումներն իրական արտահայտությամբ աճել են համապատասխանաբար՝ 13.4%, 10.5%, 19.8% և 4.3%-ով: Նշենք նաև, որ հանքագործական

⁴ Այս բաժնում ներկայացված են ճյուղի թողարկման ծավալների ցուցանիշները, որոնք տարբերվում են ճյուղի ավելացված արժեքները բնութագրող ցուցանիշերից:

արդյունաբերության աճը պայմանավորված է եղել ինչպես համաշխարհային շուկայում մետաղների գների բարձր մակարդակով, այնպես էլ ճյուղի մրցունակության բարելավումով:

Մշակող արդյունաբերության աճին նպաստել են սննդամթերքի արտադրության (15.7%), հիմնային մետաղների արտադրության (13.8%) և պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրության (83.5%) աճերը: Սննդամթերքի արտադրության աճը պայմանավորված է ինչպես հասարակության տնօրինվող եկամտի, այնպես էլ արտահանման ծավալների աճով: Էլեկտրաէներգիայի արտադրության աճը պայմանավորվել է ՋԷԿ-երի կողմից արտադրված էլեկտրաէներգիայի աճով՝ 2.2 անգամ:

Կանխատեսում: Ակնկալվում է, որ արդյունաբերության ճյուղում տարվա առաջին յոթ ամիսների տնտեսական ակտիվությանը կպահպանվի մինչև տարեվերջ և 2011 թվականի տարեկան աճը կկազմի 11,5 տոկոս՝ պայմանավորված ինչպես հանքահումքային ապրանքների գների, արտաքին պահանջարկի բարձր մակարդակով, այնպես էլ տնօրինվող եկամտի աճի արդյունքում ներքին պահանջարկի աճով: Նշված միտումները կպահպանվեն նաև 2012 թվականին, որի արդյունքում ակնկալվում է ճյուղի ավելացված արժեքի շուրջ 7.5 տոկոսանոց աճ: Վերջինիս կնպաստի նաև ճյուղում ներդրումների խրախուսմանը միտված կառավարության քաղաքականությունը⁵, ինչպես նաև արտաքին պահանջարկի կանխատեսվող աճը:

3.2.2 Գյուղատնտեսություն

2006-2008 թվականներին գյուղատնտեսության ավելացված արժեքի իրական աճը կազմել է միջինում 4.7 տոկոս: 2009 թվականին գյուղատնտեսությունն իրական աճ արձանագրած միակ ճյուղն է եղել (6 տոկոս): 2010 թվականին տնտեսության այս ճյուղը խոշոր՝ 15.7 տոկոս անկում է ունեցել, պայմանավորված գերազանցապես անբարենպաստ բնակլիմայական պայմանների ազդեցության արդյունքում բուսաբուծության համախառն արտադրանքի ցուցանիշի 20.3 տոկոս նվազմամբ:

2011 թվականի հունվար-հուլիսին գյուղատնտեսության համախառն թողարկումն իրական արտահայտությամբ աճել է՝ 11.7 տոկոսով⁶, որին հիմնականում նպաստել է բուսաբուծության շուրջ 33.5 տոկոս աճը: Անասնաբուծության ճյուղում նվազում է արձանագրվել 1.6%, որը պայմանավորված է հիմնականում ձվի արտադրության 20.7 տոկոս նվազմամբ: Մսի, կաթի արտադրության և ձկնորսության ենթաճյուղերում գրանցվել են աճի ցուցանիշներ համապատասխանաբար՝ 3.1, 0.7 և 6.2 տոկոս:

⁵ Ներմուծվող սարքավորումների և արտադրական հոսքագծերի համար վճարման ենթակա ԱԱՀ-ն հետաձգվում է:

⁶ Ճյուղերի և ենթաճյուղերի համախառն թողարկումների իրական աճերի և նպաստումների կուտակային ցուցանիշներն այս և հաջորդ ճյուղերի համար հաշվարկվել են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից՝ ՀՀ ԱՎԾ ամսական ցուցանիշների պաշտոնական հրատարակումների հիման վրա:

Կանխատեսում: Հաշվի առնելով ընթացիկ տարվա յոթ ամիսների զարգացումները, կառավարության կողմից իրականացված ծրագրերի՝ մինչ տարեվերջ սպասվող արդյունքները, ինչպես նաև հաշվարկման բազան⁷, գնահատվում է, որ տարեվերջին գյուղատնտեսության իրական աճը կլինի շուրջ 9.2 տոկոսի շրջանակում, որը հիմնականում կապահովվի բուսաբուծության հաշվին:

2012 թվականին ճյուղի աճը կկազմի 4.0 տոկոս, որի համար հիմք կհանդիսանան ճյուղի զարգացմանն ուղղված պետական կարգավորման քաղաքականությունը եւ նախորդ տարիներին դրսևորած զարգացման միտումները:

3.2.3 Շինարարություն

Շինարարության ճյուղը 2006-2008 թվականներին ունեցել է առաջանցիկ աճի տեմպ ՀՆԱ-ի աճի նկատմամբ՝ միջին հաշվով ապահովելով շուրջ 22 տոկոս իրական աճ: Այսինքն, այն հանդիսացել է տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժը: 2009 թվականին տնտեսության այս ճյուղը հանձնեց իր առաջատար դիրքը՝ արձանագրելով 41.6 տոկոս իրական անկում: 2010 թվականին շինարարությունն իրական աճի ցուցանիշ է արձանագրել, որը կազմել է 3 տոկոս: Նշված աճին հիմնականում նպաստել է կազմակերպությունների միջոցների հաշվին իրականացված շինարարության ծավալների աճը, որոնք առավելապես ուղղվել են արտադրական շինարարությանը:


2011 թվականի հունվար-հուլիսին ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացված շինարարության ծավալներն իրական արտահայտությամբ նվազել են 13.9%-ով: Ընդ որում, ամենախոշոր բացասական ազդեցությունը թողել է միջազգային վարկերի հաշվին իրականացվող շինարարության ծավալների նվազումը (նպաստումը շինարարության իրական աճին կազմել է 12.6 տոկոսային կետ): Նվազել են նաև բնակչության և կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող շինարարության իրական ծավալները (բացասական նպաստումը համապատասխանաբար՝ 1.1 և 0.9 տոկոսային կետեր), մինչդեռ պետական բյուջեի, համայնքների բյուջեների և մարդասիրական օգնության միջոցների հաշվին իրականացված շինարարության ծավալները դրական նպաստում են ունեցել (համապատասխանաբար՝ 1.5, 0.3 և 3.2 տոկոսային կետեր):

Ըստ տնտեսության ճյուղերի շինարարությունը հիմնականում ուղղված է եղել անշարժ գույքի հետ կապված գործառնություններին, որոնց բաժինը շինարարության ծավալներում կազմել է 27.5%: Աճել են նաև գյուղատնտեսության, կրթության և հանքագործական արդյունաբերության ոլորտներում իրականացված շինարարության տեսակարար կշիռները ընդհա-

⁷ 2010 թվականին բուսաբուծության ամենամեծ անկումն արձանագրվել է հուլիս ամսին՝ 41.2%:

նուր շինարարության ծավալում՝ կազմելով համապատասխանաբար 10.3%, 4.9% և 4.2%: (տե՛ս Գծապատկեր 3.2.2):

Գծապատկեր 3.2.2 Շինարարության կառուցվածքը ըստ տնտեսության ճյուղերի 2010-2011թթ. հունվար-հուլիսին



Կանխատեսում: Ընթացիկ զարգացումներին համապատասխան շինարարության ճյուղում տարեվերջին կգրանցվի անկում՝ շուրջ 4 տոկոսի շրջանակում: 2012 թվականին կանխատեսվում է, որ ճյուղում կարձանագրվի 2.5 տոկոս աճ, որը հիմնականում պայմանավորված կլինի ավելի արտադրողական ներդրումներով և կնախանջի տնտեսության մեջ կառուցվածքային փոփոխություններին նպատակաուղղված տնտեսական նոր քաղաքականության ուղղությունը:

3.2.4 Ծառայություններ և առևտուր

2006-2008 թվականներին ծառայությունների ոլորտի միջին իրական աճը կազմել է 11.1 տոկոս և ունեցել է ՀՆԱ-ի աճի տեմպը գերազանցող աճի միտում: 2009 թվականի ճգնաժամի պայմաններում տնտեսության այս ճյուղը աննշան անկում ունեցավ՝ 3.3 տոկոս, իսկ 2010

թվականին վերականգնվեց՝ գրանցելով 4.5 տոկոս իրական աճ՝ պայմանավորված հիմնականում առևտրի, տրանսպորտի ու կապի ենթաճյուղերի աճերով համապատասխանաբար՝ 4.8 և 4.9 տոկոս:

2011 թվականի անցած յոթ ամիսների տվյալներով ճյուղը հանդիսացել է տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժերից մեկը: Նշված ժամանակաշրջանում մատուցված ծառայությունների ծավալն իրական արտահայտությամբ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, աճել է 6.3%-ով, որին հիմնականում նպաստել են ֆինանսական և ապահովագրական գործունեության ծառայությունների աճը (նպաստումը կազմել է 6.0 տոկոսային կետ): Ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմել ֆինանսական և ապահովագրական գործունեության (21.6%), տեղեկատվության և կապի (22.8%), տրանսպորտի (22.9%) ծառայությունները:

2011 թվականի հունվար-հուլիսին առևտրի շրջանառությունը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ՝ համադրելի գներով, աճել է 3.2%-ով, որին հիմնականում նպաստել է մանրածախ առևտրի աճը (2.0 տոկոսային կետ): Առևտրի ծավալների իրական արտահայտությամբ աճը պայմանավորված է հիմնականում մասնավոր հատվածի տնօրինվող եկամտի աճով:

Կանխատեսում: 2011 թվականին կանխատեսվում է, որ ճյուղի ավելացված արժեքի աճը կկազմի շուրջ 4 տոկոս: Իսկ 2012 թվականին՝ պայմանավորված տնտեսության այլ ճյուղերի համահունչ զարգացման վարքագծով, ճյուղի աճը կկազմի շուրջ 3.5 տոկոս: Այլ կերպ ասած, ծառայությունների ոլորտում ակնկալվում է իր նախորդ տարիների միտումներին համապատասխան աճի ցուցանիշներ:

3.2.5. Աշխատանքի շուկա: 2006-2008 թվականներին գործազրկության մակարդակը տնտեսական բարձր աճով պայմանավորված անկման միտում է դրսևորել: Սակայն, 2009 թվականին աճել է՝ պայմանավորված ֆինանսատնտեսական ճգնաժամով, տարեվերջին կազմելով 7 տոկոս: 2011 թվականի սկզբից հանրապետությունում գործազրկության պաշտոնական մակարդակը նվազման միտում է դրսևորել: 2011 թվականի հուլիսին՝ հունվար ամսվա համեմատ, գործազրկության մակարդակը նվազել է 0.6 տոկոսային կետով՝ արտացոլելով տնտեսության վերականգնման և աշխատուժի նկատմամբ պահանջարկի աճի միտումները:

2011 թվականի հունվար-հուլիսին միջին ամսական անվանական աշխատավարձը 2010 թվականի նույն ժամանակահատվածում գրանցված ցուցանիշի նկատմամբ աճել է 6.1 տոկոսով, ինչը պայմանավորված է տնտեսության գրեթե բոլոր ճյուղերի աշխուժացմամբ (բացառությամբ շինարարության): Բյուջետային հատվածի աշխատավարձի աճն առաջանցիկ է մասնավոր հատվածի նկատմամբ և կազմում է 5.4 տոկոս, իսկ մասնավոր հատվածի աճը

4.0 տոկոս: Ընթացիկ տարվա անցած յոթ ամիսներին տնտեսության պետական և ոչ պետական հատվածներում միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է համապատասխանաբար՝ 90212 և 138379 դրամ, իսկ միջին աշխատավարձը՝ 112180 դրամ:

Կանխատեսում: 2011 թվականին տնտեսական ակտիվության աճին զուգընթաց կանխատեսվում է գործազրկության մակարդակի աստիճանական նվազում, որը կպահպանվի նաև 2012 թվականին՝ հասնելով 6.3 տոկոսի: Հաշվի առնելով կանխատեսվող տնտեսական աճի կառուցվածքը, այն կապահովվի տնտեսության ճյուղերի կողմից նոր աշխատուժ ներգրավելու հաշվին: Ընդ որում, գործազրկության անկումը համեստ կլինի, քանի որ կուղեկցվի աշխատանքի արդյունավետության (արտադրողականության) բարձրացմամբ:

Աղյուսակ 3.2.2 Գործազրկության մակարդակի դինամիկան 2007-2012թթ

	2007	2008	2009	2010	2011	2012
Գործազրկության մակարդակ	7.0	6.3	7.0	7.0	6.4	6.3

3.3 Համախառն պահանջարկ

Համախառն պահանջարկը հիմնականում պատկերացում է տալիս տնտեսությունում ստեղծված եկամուտների ծախսման ուղղությունների վերաբերյալ: Համախառն պահանջարկը կազմված է ներքին և արտաքին պահանջարկներից: Ներքին պահանջարկը տեղեկատվություն է տալիս, թե ձևավորված եկամուտներն ուղղակի սպառմանն են ուղղվելու, թե ներդրվելու են տնտեսության մեջ: Նշվածը հիմնականում բնութագրվում է պետական և մասնավոր հատվածների կողմից ստեղծված ընդհանուր եկամտում սպառման բաղադրիչներով, սպառում/ՀՆԱ, ներդրում/ՀՆԱ: Իսկ արտաքին պահանջարկը տեղեկատվություն է տալիս գործընկեր երկրների կողմից մեր ապրանքների և ծառայությունների վրա կատարված ծախսումների մասին, որը բնութագրվում է զուտ արտահանման ցուցանիշով:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

Սպառում: 2006-2008 թվականների ընթացքում սպառումը միջին հաշվով աճել է 8.6 տոկոսով, իսկ իրական ՀՆԱ-ն՝ 11.3 տոկոսով: Ընդ որում, պետական սպառումը միջին հաշվով աճել է 5.8 տոկոսով, իսկ մասնավոր սպառումը՝ 9.0 տոկոսով: Ճգնաժամային՝ 2009 թվականին վերջնական սպառումն իրական արտահայտությամբ նվազել է ընդամենը 4 տոկոսով, 14.1 տոկոս տնտեսական անկման պայմաններում, ինչը պայմանավորված է հարստության

էֆեկտով⁸: Միաժամանակ, վերջնական սպառման կառուցվածքում տեղի է ունեցել փոփոխություն: 2006-2008 թվականներին պետական և մասնավոր սպառման տեսակարար կշիռները միջինում կազմում էին համապատասխանաբար՝ 12.4 և 87.6 տոկոս, իսկ 2009 թվականին կազմել են՝ 14.2 և 85.8 տոկոս: 2010 թվականին վերջնական սպառումը իրական արտահայտությամբ աճել է 4 տոկոսով՝ ՀՆԱ-ի 2.1 տոկոս աճի պայմաններում, որը հիմնականում պայմանավորված է նախորդ տարվա նկատմամբ բնակչության տնօրինվող եկամուտների աճով: Ընդ որում, սպառման տեսակարար կշիռները մնացել են գրեթե անփոփոխ՝ 2009 թվականի համեմատ:

2011 թվականի յոթ ամիսներին վերջնական սպառումն իրական արտահայտությամբ աճել է 1.2⁹ տոկոսով, որը պայմանավորված է հիմնականում մասնավոր սպառման շուրջ 2.0 տոկոս աճով: Նույն ժամանակահատվածում պետական սպառումը նվազել է 3.6 տոկոսով: Վերջնական սպառման կառուցվածքում պետական և մասնավոր սպառման տեսակարար կշիռները 2011 թվականի նույն ժամանակահատվածում կազմել են համապատասխանաբար 13.3 և 86.7 տոկոս:

Կանխատեսում: Սպառման աճը կպահպանվի մինչև տարեվերջ և կկազմի 1.3 տոկոս, որը ցածր է նախորդ տարվա ցուցանիշից: Սպառման նման վարքագիծը հիմնականում բացատրվում է տարվա սկզբին՝ նախորդ տարվա համեմատ, արձանագրված բարձր սպառողական գների պայմաններում սպառողների տնօրինվող եկամուտների աճի վերաբերյալ վերջիններիս ոչ բարձր սպասումներով, որի արդյունքում սպառողները ցուցաբերել են զգուշավոր սպառման վարքագիծ: 2012 թվականին ակնկալվում է սպառողների վստահության վերականգնում, որի պայմաններում կարձանագրվի սպառման ավելի բարձր՝ 2.6 տոկոսանոց աճ:

Կապիտալ ներդրումներ: 2006-2008 թվականների ընթացքում կապիտալ ներդրումները միջին հաշվով աճել են 21.5 տոկոսով: Սակայն, 2009 թվականին իրական կապիտալ ներդրումները կրճատվել են 30.9 տոկոսով, ի հաշիվ մասնավոր ներդրումների 37.4 տոկոս իրական նվազման, որը մեծամասամբ պայմանավորված է եղել շինարարության ճյուղի զգալի կրճատմամբ, իսկ վերջինս կրել է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը: Պետական կապիտալ ներդրումները նույն ժամանակահատվածում աճել են շուրջ 11.5 տոկոսով, պայմանավորված կառավարության ընդլայնող տնտեսական քաղաքականությամբ: 2010 թվականին տնտեսական զարգացումների նկատմամբ մասնավոր հատվածի լավատեսական սպասումների աստիճանական վերականգնման զուգընթաց, իրական կապիտալ ներդրումներն աճել են 2.9 տոկոսով, ի հաշիվ մասնավոր ներդրումների 8.3 տոկոս աճի,

⁸ Տնօրինվող եկամտի նվազման դեպքում սպառման վարքագիծը եկամուտներին համարժեք չի կրճատվում՝ ի հաշիվ նախորդ տարիներին ընթացքում մնացած խնայողականության:

⁹ Ներկայացված սպառման իրական աճը ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականն է:

սակայն պետական ներդրումները նվազել են 16.8 տոկոսով: Պետական հատվածի ներդրումների նվազումը հետևանք է կառավարության կողմից որդեգրած՝ «Ելքի Ռազմավարության», որի ներքո պետական ֆինանսների և պարտքի կայունության ապահովման համար պետք է կատարվի 2009թ.-ին ձևավորված բյուջեի բարձր պակասուրդի աստիճանական կրճատում: Մի բան, որը հաջողվում է Հայաստանում՝ ի տարբերություն շատ երկրների:

2011 թվականի յոթ ամիսներին կապիտալ ներդրումներն իրական արտահայտությամբ աննշան աճել են (շուրջ 0.3 տոկոս¹⁰)՝ պայմանավորված հիմնականում մասնավոր ներդրումների աճով:

Կանխատեսում: Հաշվի առնելով 2011 թվականի զարգացումները ակնկալվում է, որ ներդրումների աճը կլինի զրոյական: Ընդ որում, պետական ներդրումները կնվազեն 17 տոկոսով, իսկ մասնավոր ներդրումները կավելանան 3.6 տոկոսով: 2012 թվականին շինարարության դրական աճի և ներդրումային միջավայրի ակնկալվող բարելավման արդյունքում կանխատեսվում է կապիտալ ներդրումների 0.4 տոկոս աճ, ընդ որում՝ պետական ներդրումները կնվազեն 12.2 տոկոսով, իսկ մասնավորը կավելանա 2.5 տոկոսով: Կապիտալ ներդրումներում՝ չնայած համեստ աճի ցուցանիշի, ակնկալվում է, որ մասնավոր հատվածի կողմից ներդրումները կլինեն հիմնականում արտադրողական բնույթի՝ նպաստելով հետագա արտադրողականության աճին և շարունակելով այն կառուցվածքային տեղաշարժը, որը սկսվել է ձգնաժամից հետո:

Զուտ արտահանում: 2006-2008 թվականների ներմուծումն¹¹ իրական արտահայտությամբ միջին հաշվով աճել է 8 տոկոսով, իսկ արտահանումը կրճատվել է նույն չափով: Սա պայմանավորված է եղել նշված ժամանակահատվածում դրամի իրական արտահայտությամբ արժևորմամբ և բնակչության եկամուտների շարունակական աճով: 2009 թվականին արտահանման ծավալները կրճատվել են 10.4 տոկոսով, իսկ ներմուծումը՝ 19.2 տոկոսով: Չնայած ազգային արժույթի արժեզրկմանը, այս ցուցանիշները պայմանավորված են արտահանվող ապրանքների նկատմամբ համաշխարհային պահանջարկի նվազմամբ և փոխարժեքի ազդեցության դրսևորման ժամանակային խզմամբ: 2010 թվականին արտահանման ծավալները աճել են 26.5 տոկոսով, իսկ ներմուծմանը՝ 12.8 տոկոսով, որը պայմանավորված էր համաշխարհային տնտեսությունում պահանջարկի աստիճանական

¹⁰ Այս հատվածում բերված ցուցանիշները ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականներն են:

¹¹ Այս բաժնում ներկայացված են արտահանման և ներմուծման իրական աճի ցուցանիշները դրամային արտահայտությամբ:

վերականգնմամբ, արտահանվող ապրանքների գնային մրցունակության բարձրացմամբ¹², ինչպես նաև նախորդ տարիներին կառավարության հակաճգնաժամային գործողությունների շրջանակներում արտահանողներին ցուցաբերած օժանդակությամբ:

2011 թվականի յոթ ամիսներին արտահանման ծավալները աճել են 8.5 տոկոսով, պայմանավորված թե համաշխարհային տնտեսությունում պահանջարկի վերականգնմամբ և թե արտահանողներին ցուցաբերված օժանդակությամբ, իսկ ապրանքների և ծառայությունների ներմուծումը նվազել է 11.2 տոկոսով:

Կանխատեսում: Ակնկալվում է, որ մինչև տարեվերջ արտահանման ծավալների աճը մի փոքր կարագանա՝ համահունչ լինելով ինչպես տնտեսության ներքին զարգացումներին, այնպես էլ ճգնաժամից հետո վերականգնվող համաշխարհային պահանջարկին և կունենանք արտահանման շուրջ 13.7 տոկոսանոց աճ: Բայց պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ 2010 թվականը հանդիսացել է հետճգնաժամային տարի և արտահանման աճը կրել է բազային էֆեկտի ազդեցությունը, քանի որ հաշվարկվել է նախորդ տարվա անկման նկատմամբ: 2011 թվականի ընթացքում ներմուծման անկման տեմպը կնվազի տարեսկզբի համեմատ եւ տարվա վերջին կկազմի 0.4 տոկոս՝ էապես պայմանավորված լինելով տնօրինվող եկամտի արագացող աճով: 2012 թվականին նշված միտումները կպահպանվեն և կկայունանան, որի արդյունքում կանխատեսվում է արտահանման ծավալների 12.2 տոկոս աճ, իսկ ներմուծման նվազումը կփոխարինվի 4.8 տոկոս աճով:

Աղյուսակ 3.3.1 ՀՆԱ-ի ծախսային բաղադրիչների իրական աճերը, %

	2006	2007	2008	2009	2010	2011	2012
Սպառում	9.0	12.3	4.5	-4.0	4.0	1.3	2.6
Ներդրում	32.2	19.7	12.6	-30.9	2.9	0.0	0.4
Արտահանում	-7.3	-3.5	-13.1	-10.4	26.5	13.7	12.2
Ներմուծում	3.8	13.0	7.3	-19.5	12.8	-0.4	4.8
Ընդամենը ՀՆԱ	13.2	13.7	6.9	-14.1	2.1	4.6	4.2

ՀՆԱ-ի ծախսային կառուցվածքում 2012 թվականներին կանխատեսվում է սպառման մասնաբաժնի կրճատում, որը փոխհատուցվում է զուտ արտահանման աճով: Սա պայմանավորված է նաև 2010-2011թթ. սպառման նախաճգնաժամային մակարդակի վերականգնմամբ և տնտեսության արտահանելի հատվածի մեծացմամբ:

Աղյուսակ 3.3.2 Ծախսային բաղադրիչների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի կազմում

	2006	2007	2008	2009	2010	2011	2012
--	------	------	------	------	------	------	------

¹² Գնային մրցունակությունը բնութագրվում է իրական փոխարժեքով, երբ արժեզրկվում է, այլ հավասար պայմաններում ասում են, որ երկրի արտահանողները գտնվում են բարենպաստ գնային մրցունակության պայմաններում և հակառակը:

Սպառում	82.3	81.8	81.8	93.7	94.0	91.2	89.3
Ներդրում	35.9	37.8	40.9	34.7	33.4	31.3	30.0
Զուտ արտահանում, այդ թվում	-15.9	-20.0	-25.6	-27.5	-24.2	-21.4	-19.1
Արտահանում ¹³	23.4	19.2	15.0	15.5	20.6	22.4	23.1
Ներմուծում ¹⁴	-39.3	-39.2	-40.7	-43.0	-44.8	-43.8	-42.1
Վիճ. Շեղում	-2.4	0.4	2.9	-0.8	-3.2	-1.1	-0.2
Ընդամենը ՀՆԱ	100	100	100	100	100	100	100

3.4 Գնային փոփոխականներ

Տնտեսությունում գների մակարդակը բնութագրվում է սպառողական գների ինդեքսով (ՍԳԻ) կամ ՀՆԱ դեֆլատորով: Իսկ դրանց փոփոխությունները ցույց են տալիս տնտեսությունում նկատվող գնաճի կամ գնանկման միտումները: ՍԳԻ-ն ցույց է տալիս որոշակի սպառողական ապրանքների (ներառյալ ներմուծված) զամբյուղի գների վարքագիծը, իսկ ՀՆԱ դեֆլատորը՝ միայն մեր տնտեսությունում ստեղծված ապրանքների և ծառայությունների գների վարքագիծը:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

Սպառողական գներ: Վերջին տարիների ընթացքում սպառողական գները հիմնականում կայուն են եղել՝ չգերազանցելով 4 ± 1.5 տոկոս նպատակային միջակայքը: Բացառություն են կազմել 2007, 2009 և 2010 թվականները, երբ 2007 թվականին սպառողական գների մակարդակը տարեվերջին կազմել է 6.6 տոկոս՝ պայմանավորված արտաքին շոկերով, մասնավորապես, նավթի և ցորենի միջազգային գների բարձրացմամբ: 2009 թվականի տարեվերջին 12-ամսյա գնաճը կազմել է 6.5 տոկոս, որին հիմնականում նպաստել են որոշ ներմուծվող սպառողական ապրանքների համաշխարհային գների աճը, մարտի սկզբին դրամի կտրուկ արժեզրկմամբ պայմանավորված ներմուծված ապրանքների գների ճշգրտումը և ապրիլից հիմնական կոմունալ ծառայությունների սակագների բարձրացումը: Սակայն նշենք, որ 2009 թվականի 12-ամսյա գնաճը մինչև նոյեմբեր պահպանվել է նպատակային թիրախի սահմաններում և գնաճի տեմպի կտրուկ ավելացում է արձանագրվել դեկտեմբերին՝ պայմանավորված գյուղատնտեսական ապրանքների գների առավել ցայտուն սեզոնային աճով: 2010 թվականի տարեվերջին 12-ամսյա գնաճը կազմել է 9.4%: Բարձր գնաճային միջավայրը հիմնականում պայմանավորվել է առաջարկի գործոններով՝ առավելապես գյուղատնտեսության ճյուղի խորը անկմամբ, ինչի հետևանքով արձանագրվեց գյուղատնտեսական ապրանքների աննախադեպ բարձր գնաճ: Բարձր գնաճին նպաստել են նաև որոշ պարենային և հումքային ապրանքների (ցորեն, շաքար, նավթ) միջազգային գների զգալի բարձրացումը (ցորեն, շաքար,

¹³ Ն եր առ վ ած ե ն ն ա ն ծ առ այ ու թ յ ու ն ն եր ը

¹⁴ Ն եր առ վ ած ե ն ն ա ն ծ առ այ ու թ յ ու ն ն եր ը


նավթ) և 2010 թվականի ապրիլի 1-ից գազի և ջրի սակագների բարձրացումը: Ընդ որում հատկանշական է, որ 9.4% տոկոս գնաճի միայն 7.5 տոկոսային կետը պայմանավորվել է պարենային ապրանքների գների աճով, որից 2 տոկոսային կետը նպաստել է հացամթերքը, 5 տոկոսային կետը՝ գյուղատնտեսական պարենային ապրանքների գների աճը:

2011 թվականի օգոստոսին նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ արձանագրվել է 0.2 տոկոս գնանկում, որը հիմնականում պայմանավորված է եղել պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների 2.1 տոկոս նվազմամբ, ոչ պարենային ապրանքների գների 1.9 տոկոս և ծառայությունների սակագների 2.2 տոկոս աճով:

2011 թվականի առաջին եռամսյակում դեռևս պահպանվել էր նախորդ տարվա վերջից ձևավորված բարձր գնաճային ֆոնը, սակայն դրանից հետո գնաճային ճնշումները աստիճանաբար թուլացան՝ պայմանավորված գյուղատնտեսության ճյուղի վերականգնմամբ, տարեսկզբից ԿԲ-ի դրամավարկային պայմանների խստացմամբ և հարկաբյուջետային քաղաքականության զսպող ազդեցությամբ, աշխատանքի շուկայի թույլ գնաճային ազդեցությամբ, ինչպես նաև որոշակի ազդեցություն ուներ արտաքին աշխարհից փոխանցվող գնաճային ճնշումների թուլացումը:

Կանխատեսում: Նշված զարգացումները թույլ են տալիս 2011 թվականի համար ակնկալել սպասվածից ավելի ցածր գնաճ: Ընդ որում 2011 և 2012 թվականների համար գնաճը կպահպանի նպատակային թիրախի 4 (+/-1.5) տոկոս տատանման թույլատրելի միջակայքը և 12-ամսյա գնաճը համապատասխանաբար կկազմի շուրջ 4.6 և 4.1 տոկոս:

Գծապատկեր 3.4.1 2000-2012 թվականների գնաճի (ՍԳԻ) դինամիկան



ՀՆԱ դեֆլյատոր: ՀՆԱ դեֆլյատորը 2006-2008 թվականների ընթացքում եղել է կայուն և կանխատեսելի՝ միջին հաշվով կազմելով 104.9 տոկոս: 2009 թվականի տնտեսական ճգնաժամով պայմանավորված դեֆլյատորի մեծությունը վերջին տարիներին արձանագրված ցուցանիշի միջինից զգալիորեն ցածր էր՝ 102.6 տոկոս:

2010 թվականին միտումը կտրուկ փոխվել է. դեֆլյատորը կազմել է 109.2 տոկոս՝ պայմանավորված գյուղատնտեսության և արդյունաբերության գների բարձր դեֆլյատորներով, ընդ որում արդյունաբերության դեֆլյատորը կրում էր միջազգային շուկաների (պղնձի և մոլիբդենի մասով), ինչպես նաև գազի գների աճի ազդեցությունը: Իսկ գյուղատնտեսության բարձր դեֆլյատորը հիմնականում պայմանավորված էր գյուղատնտեսական ապրանքների տեղական առաջարկի կրճատմամբ:

2011 թվականի առաջին եռամսյակում ՀՆԱ դեֆլյատորը կազմել է 110.3 տոկոս, որը բավականին բարձր է և կրում է հիմնականում նախորդ տարվա գյուղատնտեսական արտադրանքի կրճատման արդյունքում ձևավորված բարձր գների ազդեցությունը:

Կանխատեսում: Մինչև տարեվերջ՝ պայմանավորված հիմնականում գյուղատնտեսության դրական զարգացումներով, կանխատեսվում է գրանցվածից ավելի ցածր՝ 105.7 տոկոս, ՀՆԱ դեֆլյատոր:

2012 թվականին՝ հաշվի առնելով ներքին գների իներցիոն հակվածությունը, դեֆլյատորը կկայունանա՝ կազմելով շուրջ 104.6 տոկոս:

3.5 Ֆինանսական շուկա

Ֆինանսական շուկաները բնութագրվում են մի շարք ցուցանիշների համախմբով: Սակայն, այս բաժնում մենք կուսումնասիրենք հիմնականում երկու ցուցանիշ՝ առաջինը ֆինանսական միջնորդության խորությունն է և երկրորդը՝ ֆինանսական շուկայում ձևավորված տոկոսադրույքները՝ որպես ֆինանսական միջոցների ձևավորված գին:

Ֆինանսական միջնորդության խորության ցուցանիշը բնութագրում է թե ֆինանսական ինստիտուտները (բանկեր, վարկային կազմակերպություններ, ներդրումային ընկերություններ և այլն) ինչ չափով են ներգրավված տնտեսություն մեջ:

Ֆինանսական շուկայում ձևավորված տոկոսադրույքներն ազատ մրցակցության պայմաններում ցույց են տալիս, թե ինչքան է փողի գինը՝ հաշվի առած ֆինանսական շուկայի մասնակիցների կողմից գնահատվող տարբեր ռիսկերի աստիճանը: Եթե տոկոսադրույքները բարձր են տրված ռիսկայնության աստիճանի պարագայում, ապա տնտեսությունում առկա է գնաձային ճնշումներ կամ սպասումներ և հակառակը:

Այսինքն, ֆինանսական շուկայում ձևավորվում է փողի առաջարկը, պահանջարկը (փողի զանգված, փողի բազա) և դրա գինը (բանկային տոկոսադրույք) տնտեսական գործունեություն ծավալողների համար: Այդ տեսանկյունից, ֆինանսական կայունությունը մակրոտնտեսական կայունության պահպանման համար ունի կարևոր նշանակություն:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

Վերջին տարիներին տնտեսական աճի բարձր տեմպերով պայմանավորված փողի զանգվածը շարունակական աճել է. 2006 և 2007 թվականներին աճերը կազմել են համապատասխանաբար 32.9 տոկոս և 42.9 տոկոս: Սակայն, 2008 թվականի վերջին եռամսյակում, տնտեսության աճի տեմպերի դանդաղման և 2009 թվականին առաջին կեսին արձանագրված 14.1 տոկոս տնտեսական անկման պարագայում, նկատելի եղավ նաև փողի նկատմամբ պահանջարկի նվազումը, թեև 2009թ-ի տարվա երկրորդ կեսին այն սկսեց կտրուկ վերականգնվել: Արդյունքում փողի զանգվածի աճը 2008 և 2009 թվականներին կազմել է համապատասխանաբար 2.3 և 15.1 տոկոս: 2010 թվականին փողի զանգվածի աճը կազմել է 11.8 տոկոս: Արդեն, 2011 թվականի հուլիսին փողի զանգվածն աճել է 25.3 տոկոսով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ:

2006 և 2007 թվականներին փողի բազան ևս աճել էր և կազմել՝ համապատասխանաբար 41.1 և 50.9 տոկոս: 2008 և 2009 թվականների տարեկան արդյունքներով փողի բազայի աճը կազմել էր համապատասխանաբար 5.3 և 13.8 տոկոս: 2008 թվականին փողի բազայի համեմատաբար զուսպ աճի տեմպը պայմանավորված էր փողի նկատմամբ պահանջարկի նվազմամբ, իսկ 2009 թվականին արձանագրված 13.8 տոկոս աճը տարվա երկրորդ կեսից տնտեսության աստիճանական աշխուժացման արդյունք էր: 2010 թվականին փողի բազան նվազել է 0.8 տոկոսով պայմանավորված հիմնականում գնաձի զսպման նպատակով ՀՀ ԿԲ-ի կողմից դրամավարկային պայմանների խստացմամբ: Արդեն, 2011 թվականի հուլիսին փողի բազան աճել է 21.9 տոկոսով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ:

Վերջին 5 տարիների ընթացքում առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի կշիռը ՀՆԱ-ի մեջ զգալի ավելացել է: Հատկանշական է, որ նույնիսկ ձգնաժամի ժամանակ նշված ցուցանիշի նվազում չի արձանագրվել, ինչում կարևոր դերակատարություն է ունեցել կառավարության հակաձգնաժամային միջոցառումների շրջանակներում համակարգաստեղծ ձեռնարկություններին, ինչպես նաև արտահանման և ներմուծման փոխարինման ուղղվածություն ունեցող ՓՄՁ սուբյեկտներին կառավարության կողմից տրամադրված ֆինանսական օժանդակությունը:

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրված վարկերը 2010 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ նախորդ տարվա համեմատ ավելացել են 214.6

մլրդ դրամով կամ 29.2%-ով¹⁵ և ՀՆԱ-ի մեջ կազմել 27.1 տոկոս, ինչը 3.7 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: Արդեն 2011 թվականի հուլիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ վարկերը ավելացել են 310.7 մլրդ դրամով (38.2%-ով):

Նշենք նաև, որ 2006 թվականից զգալի ոլորտային փոփոխություններ են արձանագրվել առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի կշիռներում: 2010 թվականի վերջի դրությամբ արդյունաբերության ոլորտին տրված վարկերի կշիռն ընդհանուր վարկերի մեջ կազմել է 23.01 տոկոս և 2006 թվականի համեմատ աճել է 5.8 տոկոսային կետով, սպառողական վարկերի կշիռը 2006 թվականի նկատմամբ նվազել է 11.5 տոկոսային կետով կազմելով՝ 18.5 տոկոս, շինարարության ոլորտին տրված վարկերի կշիռը 2006 թվականի նկատմամբ աճել է 3.4 տոկոսով՝ կազմելով 8.44 տոկոս (մյուս ոլորտներում զգալի փոփոխություններ չեն արձանագրվել):

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները 2009 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ նախորդ տարվա համեմատ ավելացել են 191.1 մլրդ դրամով և ՀՆԱ-ի մեջ կազմել 20.9 տոկոս: Հատկանշական է նաև, որ ճգնաժամի պայմաններում ֆինանսական շուկաների նկատմամբ վստահության անկում՝ ի դեմս բանկերից ավանդների փախուստի և ֆինանսական շուկաների անկայունություն չի նկատվել: Նշվածը պայմանավորվել է ճգնաժամի ժամանակ կառավարության և կենտրոնական բանկի միջև քաղաքականությունների արդյունավետ կորդինացմամբ, ինչպես նաև նախորդ տարիներից եկող ֆինանսական համակարգի բարձր կապիտալացմամբ: 2010 թվականի վերջի դրությամբ առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդները նախորդ տարվա համեմատ ավելացել են 45.3 մլրդ դրամով կամ 6.9 տոկոսով և ՀՆԱ-ի մեջ կազմել 20.1 տոկոս: Նշենք, որ 2010 թվականի ընթացքում նկատվել է դոլարայնացման մակարդակի նվազում ներգրավված ավանդների 69 տոկոսն են կազմել արտարժույթով ավանդները՝ նախորդ տարվա 73.4 տոկոսի փոխարեն: Նշվածը պայմանավորվել է ԿԲ-ի և Կառավարության կողմից ապադոլարայնացման միջոցառումների իրականացմամբ: Արդեն 2011 թվականի հուլիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ավանդները ավելացել են 166.9 մլրդ դրամով (26.2%-ով), իսկ դոլարայնացման մակարդակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 3.5 տոկոսային կետով կազմելով 67.9 տոկոս:

Աղյուսակ 3.5.1 Բանկային ակտիվներ/ՀՆԱ 2008 թվականից 2011 թվականի ապրիլ ամիսը (մլրդ դրամով)

(մլրդ. դրամ)				առ 01.01.	առ 01.02.	առ 01.03.	առ 01.04.	առ 01.05.	առ 01.06.	առ 01.07.
--------------	--	--	--	-----------	-----------	-----------	-----------	-----------	-----------	-----------

¹⁵ Ը ն դ գ ր կ վ ա ծ չ է ն կ ու տ ա կ վ ա ծ տ ո կ ո ս ն ե ր ը : Վ ա ր կ ե ր ի մ է ջ ն ե ր ա ռ վ ա ծ է ն ն ա ն ֆ ա կ տ ր ի ն գ ա յ ի ն , լ ի գ ի ն գ ա յ ի ն գ ո ր ծ ա ռ ն ու թ յ ու ն ն ե ր ը և ռ ե պ ո հ ա մ ա ձ ա յ ն ա գ ր ե ր ը :

ՀՆԱ անվանական	3568.3	3141.7	3501.5	-	-	-	-	-	-	-
Վարկեր	634.5	735.2	949.8	960.8	996.2	1039.3	1067.4	1110.6	1123.3	1123.6
Վարկերի կշիռը ՀՆԱ-ում % ¹⁶	17.8	23.4	27.1	-	-	-	-	-	-	-
Ավանդներ	465.9	657	702.3	697.7	718.9	754.9	746.7	757.4	785.7	802.8
Ավանդների կշիռը ՀՆԱ-ում %	13.1	20.9	20.1	-	-	-	-	-	-	-

Առևտրային բանկերի՝ մինչև մեկ տարի ժամկետով դրամով տրամադրված վարկերի և ներգրավված ավանդների տոկոսադրույքները 2006-2008 թվականներին միջինում ավելի ցածր են եղել (համապատասխանաբար 17.3 և 6.21 տոկոս) քան 2009, 2010 թվականներին (համապատասխանաբար 18.98 և 8.8 տոկոս): Արդեն 2011 թվականի հուլիսին առևտրային բանկերի դրամով տրամադրված վարկերի տոկոսադրույքները կազմել են 17.24 տոկոս՝ 2010 թվականի հուլիսի 18.32 տոկոսի համեմատ: Նույն ժամանակահատվածում առևտրային բանկերի դրամով ներգրավված ավանդների տոկոսադրույքները ևս նվազել են: Այսպես, եթե 2010 թվականի հուլիսին ավանդների տոկոսադրույքը կազմել է 9.53 տոկոս, ապա 2011 հուլիսին այն նվազել է 0.58 տոկոսային կետով (8.95 տոկոս):

Աղյուսակ 3.5.2 Ֆինանսական շուկայի 2008-2011թթ առանձին ամիսների միջին տոկոսադրույքները

%	2008		2009		2010		2011						
	VII	XII	VII	XII	VII	XII	I	II	III	IV	V	VI	VII
Վարկեր ¹⁷	16.8	16.5	18.54	18.79	18.32	18.9	18.25	18.66	18.29	17.01	17.62	17.24	17.24
Ավանդներ	6.23	7.71	9.11	8.10	9.53	8.76	8.74	9.23	9.05	9.37	9.22	9.34	8.95

Կանխատեսում: Հաշվի առնելով արտաքին և ներքին գնաձային միջավայրի որոշակի կայունացման միտումները և հետագա մեկ տարվա ժամանակահատվածում գնաձային ճնշումների զգալի մեղմման ակնկալիքները, ինչպես նաև ԿԲ-ի կողմից ապադոլարայնացման ուղղությամբ ձեռնարկված լայնածավալ միջոցառումների արդյունքում դրամի նկատմամբ պահանջարկի մեծացումը 2011 թվականի համար փողի բազայի և զանգվածի աճերը կանխատեսվել է համապատասխանաբար 16.2 և 15.1 տոկոս: 2011 թվականի ֆինանսական միջնոր-

¹⁶ Ցուցանիշների համադրելի թույլ նույնը ապահովելու տեսանկյունից վարկերը պետք է դիտարկել տարեկան ՀՆԱ-ի մեջ:

¹⁷ Հաշվարկված է 16 օրից մինչև մեկ տարի ժամկետով, միայն դրամով տրամադրված վարկերի և ներգրավված ավանդների համար (առանց միջբանկային շուկայի):

դության մակարդակը բնութագրող ցուցանիշներից՝ փողի բազմարկիչը նույնպես կաճի՝ շուրջ 0.2 տոկոսային կետով:

3.6 Վճարային հաշվեկշիռ

Հայաստանի արտաքին տնտեսական գործունեության արդյունքում տեղի են ունենում տնտեսական հոսքեր դեպի հանրապետություն և հակառակ ուղղությամբ: Այդ հոսքերը արտացոլվում են երկրի վճարային հաշվեկշռում: Վճարային հաշվեկշիռը բաղկացած է երկու հիմնական բաժիններից.

- ընթացիկ հաշիվ (ցույց է տալիս ոչ ռեզիդենտների հետ իրականացվող իրական գործարքները՝ ներմուծում, արտահանում, տրանսֆերտներ և գործոնային եկամուտներ)
- կապիտալի և ֆինանսական հաշիվ (ցույց է տալիս ոչ ռեզիդենտների հետ ֆինանսական բնույթի գործարքները (կապիտալի ներհոսքն ու արտահոսքը))

Տնտեսության արտաքին կայունության տեսանկյունից կարևոր ցուցանիշ է ընթացիկ հաշվի դեֆիցիտը ՀՆԱ-ի նկատմամբ: Միաժամանակ պետք է նշել, որ արտաքին աշխարհի հետ հարաբերություններում Հայաստանը համարվում է փոքր և բաց տնտեսություն ունեցող երկիր, ինչը նշանակում է, որ տնտեսական հոսքերի շարժը դեպի երկիր և երկրից դուրս հնարավորինս ազատականացված է: Դրա հետ մեկտեղ փոքր բաց տնտեսություններին հատկանշական է բարձր զգայնությունը համաշխարհային տնտեսության զարգացումներից (միջազգային բորսաներում գնանշվող ապրանքների գներ, գործընկեր երկրների տնտեսական զարգացում, համաշխարհային տնտեսության զարգացման միտում և այլն):

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

Մինչձգնաժամային տարիներին իրականացված տնտեսական և արժույթային քաղաքականությունների արդյունքում ընթացիկ հաշվի հիմնական ցուցանիշների մասով ձեռքբերումները արտահայտվեցին ընթացիկ հաշվի պակասուրդի զգալի կրճատմամբ: Սակայն, սկսած 2008 թվականի 4-րդ եռամսյակից, տնտեսությունը կրեց համաշխարհային ֆինանսական ճգնաժամի անբարենպաստ դրսևորումները՝ կրճատվեցին Հայաստան ներհոսող տրանսֆերտները և գործոնային եկամուտները, ինչպես նաև հայաստանյան ապրանքների նկատմամբ արտաքին պահանջարկը: 2009 թվականին ճգնաժամի խորացմանը զուգահեռ ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ կրճատվեց 26.5 տոկոսով՝ արտահանումը նվազեց 32.7, իսկ ներմուծումը՝ 25.0 տոկոսով: Ներմուծման նվազումը, որը տեղի է ունեցել առաջին անգամ վերջին 8 տարիների ընթացքում (2002 թվականից սկսած), հիմնականում պայմանավորված էր բնակչության տնօրինվող եկամուտների նվազմամբ, և մասամբ՝ 2009 թվականի մարտին

տեղի ունեցած փոխարժեքի կտրուկ արժեզրկմամբ: Արդյունքում 2009 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը խորացավ՝ կազմելով ՀՆԱ-ի 15.8 տոկոսը:

2010 թվականից, պայմանավորված համաշխարհային, ինչպես նաև ՀՀ տնտեսության վերականգնմամբ, արտաքին առևտրի ցուցանիշները բարելավվել են և դրսևորել են աճի միտումներ: Այսպես, 2010 թվականին տեղի է ունեցել արտահանման և ներմուծման դոլարային ծավալների աճ. արտահանումն աճել է 57 տոկոսով՝ կազմելով 1175.4 մլն դոլար, իսկ ներմուծումը կազմել է 3208.0 մլն դոլար¹⁸՝ աճելով 13.4 տոկոսով: Ներմուծման աճը հիմնականում պայմանավորված էր բնակչության տնօրինվող եկամուտների աճով և տնտեսության վերականգնմամբ: Արտահանման ցուցանիշի բարելավման վրա դրական ազդեցություն է ունեցել նաև ՀՀ կառավարության կողմից վարվող՝ արտահանողներին ֆինանսական և ոչ ֆինանսական օժանդակության քաղաքականությունը: Այդուսակ 3.6.1-ում ներկայացված են արտաքին հատվածի հիմնական ցուցանիշների միտումները և սպասումները (տե՛ս նաև Գծապատկեր 3.6.1-ը):

2011 թվականի հունվար-հուլիսին ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ աճել է 13.5 տոկոսով, ընդ որում՝ արտահանումն աճել է 31.4 տոկոսով՝ կազմելով 709.5 մլն դոլար, իսկ ներմուծումն աճել է 8.7 տոկոսով՝ կազմելով 2196.3¹⁹ մլն դոլար: Տարվա յոթ ամիսներին արտահանման 31.4 տոկոս աճի ամենաբարձր՝ 14.1 տոկոսային կետը պայմանավորված է «Հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի արտահանման ավելացմամբ, որը կազմել է 47.7 տոկոս: Արտահանման աճի 7.0 տոկոսային կետը պայմանավորվել է «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանից իրեր», 4.0 տոկոսային կետը՝ «Պատրաստի սննդի արտադրանք» և 2.8 տոկոսային կետը՝ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի ծավալների աճով, որոնք կազմել են համապատասխանաբար՝ 20.7, 39.5 և 18.9 տոկոս:

Ընթացիկ տարվա հունվար-հուլիսին ընդհանուր ներմուծման 8.7 տոկոս աճի ամենաբարձր 3.4 և 1.9 տոկոսային կետերը պայմանավորված են «Հանքահումքային արտադրանք» և «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի ներմուծման ավելացմամբ, որը կազմել է համապատասխանաբար 19.2 և 22.1 տոկոս:

2011 թվականի հունվար-հուլիսին ապրանքների գծով արտաքին առևտրի բացասական մնացորդը (արտահանումը և ներմուծումը հաշվարկված ՖՕԲ գներով) կազմել է 1148.5 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 61.4 մլն ԱՄՆ դոլարով կամ 5.1 տոկոսով:

2011 թվականի հունվար-հուլիսին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության 26.7 տոկոսը բաժին է ընկել ԱՊՀ և 33.8 տոկոսը՝ ԵՄ երկրներին, 2010 թվականի համապատասխան

¹⁸ ՀՀ վճարային հաշվեկշռի տվյալներով (ՖՕԲ)

¹⁹ ՀՀ մաքուսային հայտարարագրերով (CIF)

ժամանակահատվածի ընթացքում նշված երկրների տեսակարար կշիռները կազմել են 27.6 և 31.7 տոկոս: ԵՄ երկրների ապրանքաշրջանառության աճը 2011 թվականի հունվար-հուլիսին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ կազմել է 21.1 տոկոս, իսկ ԱՊՀ երկրների՝ 9.6 տոկոս: ՀՀ խոշոր առևտրային գործընկեր երկրների շրջանակում ընդգրկվել են Գերմանիան (առևտրաշրջանառության 7.9%-ը), Չինաստանը (7.1%), Իրանը (6.1%), Բուլղարիան (5.3%), ԱՄՆ-ն (4.7%), Թուրքիան (4.1%), Իտալիան (3.5%), Նիդերլանդները (3%), Բելգիան (2.5%), ինչպես նաև ԱՊՀ երկրներից՝ Ռուսաստանը (19.5%), Ուկրաինան (4.8%):

Հայաստանյան ապրանքների նկատմամբ ներկայացնելով հիմնական պահանջարկը, 2011 թվականի հունվար-հուլիս ամիսներին ՀՀ արտահանման 31.4 տոկոս աճի 29.6 տոկոսային կետը ապահովել են հետևյալ 7 երկրները. Ռուսաստանը՝ 5.6, Իրանը՝ 5.4, Իսպանիան՝ 5.2, Նիդերլանդները՝ 4.2, Կանադան՝ 3.2, Բուլղարիան՝ 3.1 և Գերմանիան՝ 2.9 տոկոսային կետերով:

Փոխարժեք: Նախորդ տարիներին ձևավորված ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժևորման միտումները 2009 թվականի տարեսկզբից դադարել են: Մասնավորապես՝ եթե 2008 թվականի դեկտեմբեր ամսին ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը կազմել էր 307.8 դրամ, ապա 2009 թվականի դեկտեմբերին այն կազմել է 380.47 դրամ՝ տարվա ընթացքում միջին հաշվով արժեզրկվելով 19.1 տոկոսով: Ըստ էության փոխարժեքի նման վարքագիծը պայմանավորված է եղել համաշխարհային ճգնաժամի հետևանքով արտարժույթի ներհուսքի կտրուկ կրճատմամբ, որի արդյունքում տեղի է ունեցել հավասարակշիռ փոխարժեքի վարքագիծը պայմանավորող մակրոտնտեսական հիմնարարներից մեկի՝ ֆինանսական ներհուսքի վարքագծի փոփոխություն և փոխարժեքը ճշգրտվել է: 2009 թվականին տարվա միջին փոխարժեքը կազմել է 363.28 դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց (2008-ին՝ 305.97). նախորդ տարվա միջինի նկատմամբ գրանցվել է դրամի անվանական արժեքի 15.8 տոկոս արժեզրկում՝ 2008 թվականի համապատասխան ցուցանիշի զգալի արժևորման դիմաց (11.8 տոկոս): 2010 թվականի ընթացքում դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքը գրեթե եղել է կայուն՝ դրսևորելով սեզոնային արժեզրկման և արժևորման վարքագծեր: Տարվա միջին փոխարժեքը կազմել է 373.66 դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց և նախորդ տարվա միջինի նկատմամբ գրանցվել է դրամի անվանական արժեքի 2.8 տոկոս արժեզրկում՝ 2009 թվականի համապատասխան ցուցանիշի զգալի՝ 15.8 տոկոս արժեզրկման դիմաց:

2011 թվականի ընթացքում ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը դրսևորել է արժևորման վարքագիծ: Այսպես, 2011 թվականի հունվար-հուլիս ամիսների միջին փոխարժեքը կազմել է 369.71 դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արժևորվելով 3.2 տոկոսով:

«Ազգային արժույթը ոչ միայն դուլարի, այլ արտաքին առևտրի տեսանկյունից առավել կարևոր մի քանի արժույթներից բաղկացած «զամբյուղի» նկատմամբ (անվանական արդյունավետ փոխարժեք²⁰) ընթացիկ տարվա յոթ ամիսներին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ արժեզրկվել է 1.3 տոկոսով, ինչը նշանակում է, որ վերոնշյալ «զամբյուղում» ընդգրկված հիմնական գործընկեր-երկրների արժույթները դրամի նկատմամբ ընդհանուր առմամբ ավելի շատ են արժևորվել: Ի տարբերություն անվանական արդյունավետ փոխարժեքի վարքագծի իրական արդյունավետ փոխարժեքը տարվա յոթ ամիսների ընթացքում արժևորվել է 2.0 տոկոսով²¹, ինչը կարող է իր բացասական ազդեցությունը թողնել երկրի ընթացիկ հաշվի հետագա զարգացման վրա:

Կանխատեսում: 2011 թվականին մինչև տարեվերջ ակնկալվում է, որ Հայաստանի տնտեսության արտաքին հատվածում տեղի ունեցող դրական զարգացումները կշարունակվեն, ինչը հիմնականում պայմանավորված կլինի Հայաստանի հիմնական գործընկեր երկրներում դիտվող տնտեսական վերականգնմամբ և կառավարության կողմից տնտեսության արտահանելի հատվածին ցուցաբերված օժանդակությամբ: Այսպես՝ 2011 թվականին մինչև տարեվերջ կանխատեսվում է փաստացի զարգացումներից մի փոքր ցածր՝ առնվազն 28 տոկոս դուլարային արտահայտությամբ արտահանման աճ:

2012 թվականին ակնկալվում է, որ համաշխարհային տնտեսական աճի փոքր ինչ դանդաղման, սակայն մյուս կողմից կառավարության՝ տնտեսության արտահանելի հատվածում ներդրումների խրախուսման քաղաքականությանը համահունչ, արտահանման բարձր աճը կպահպանվի, թեև աճի տեմպը նախորդ տարվա համեմատ կդանդաղի՝ կազմելով 13.5 տոկոս (դուլարային արտահայտությամբ):

Ներմուծման աճը 2011 թվականի համար ակնկալվում է փաստացի զարգացումներին համապատասխան՝ շուրջ 10.0 տոկոս: 2012 թվականի ապրանքների դուլարային արտահայտությամբ ներմուծման տարեկան աճը կդանդաղի և կկազմի 5.2 տոկոս՝ կապված արտերկրից ստացվող մասնավոր տրանսֆերտների աճի տեմպերի ակնկալվող դանդաղման հետ:

Այս պայմաններում ընթացիկ հաշվի պակասուրդը ՀՆԱ-ի նկատմամբ 2011 թվականին կկազմի 11.1 տոկոս (առանց պաշտոնական տրանսֆերտների՝ 12.5 տոկոս), իսկ 2012 թվականին այն ևս կնվազի մինչև ՀՆԱ-ի 9.8 տոկոսը (առանց պաշտոնական տրանսֆերտների՝

²⁰ Արդյուն և ավել տ փոխարժեքը ցույց է տալիս ազգային արժույթի փոխարժեքի միջին արժեքը նշ թե մեկ, այլ մի քանի, հանրապետության համար ավելի կարևոր արժույթներից բաղկացած “զամբյուղի” նկատմամբ: Ընդ որում, հաշվարկներում զամբյուղը կազմող արժույթները նախ բերվում են դուլարային արտահայտության, որից հետո ճշգրտվում են ԱՄՆ դուլար/ՀՀ դրամ փոխարժեքով, այսինքն՝ հաշվարկվում է դրամի կրոս կուրսը՝ յուրաքանչյուր տարադրամի 1 միավորի դիմաց (դրամի անուղղակի գնանշում):


²¹ Հաշվարկներում օգտագործվել են ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքի 2011թ. սեպտեմբերի 5-ի դրությամբ տվյալները:

10.2 տոկոս), արձանագրելով կառավարության կողմից որդեգրած արտաքին հաշվեկշռվածության ապահովման քաղաքականության ճիշտ ուղղությունը:

Աղյուսակ 3.6.1. Վճարային հաշվեկշիռ (ՀՆԱ-ի նկատմամբ %)

	2007	2008	2009	2010	2011	2012
Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ	-6.4	-11.8	-15.8	-14.7	-11.1	-9.8
Ընթացիկ հաշիվ (առանց պաշտոնական տրանսֆերտների)/ՀՆԱ	-7.4	-12.5	-16.8	-15.6	-12.5	-10.2
Այդ թվում՝ եկամուտներ ուղղակի ներդրումներից/ՀՆԱ	-3.6	-2.4	-3.8	-3.9	-3.9	-3.9
Ուղղակի ներդրումներ/ՀՆԱ	7.6	7.9	8,4	6,0	5,9	5,7

Գծապատկեր 3.6.1 Ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՆԱ, 2000-2012թթ.



3.7 Պետական հատված

2006-2008 թվականներին պետական բյուջեի եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ կազմել են միջինում 20.4 տոկոսը՝ դրսևորելով շարունակական աճի միտումներ: 2009 թվականին

պետական բյուջեի եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 22 տոկոսը, պահպանվելով նախորդ տարվա նույն մակարդակի վրա, իսկ հարկային եկամուտները՝ ներառյալ պարտադիր սոցիալական ապահովության վճարները, կազմել են ՀՆԱ-ի 19.9 տոկոսը՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 20.3 տոկոսի դիմաց:

2010 թվականին պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 22.3 տոկոսը, նախորդ տարվա նկատմամբ բարելավվելով 0.3 տոկոսային կետով, իսկ հարկային եկամուտները՝ ներառյալ պարտադիր սոցիալական ապահովության վճարները, կազմել են ՀՆԱ-ի 20 տոկոսը, նախորդ տարվա համեմատ բարելավվելով 0.1 տոկոսային կետով: Նախորդ տարվա նկատմամբ պետական բյուջեի եկամուտների անվանական աճը կազմել է 13.1 տոկոս, իսկ հարկային եկամուտներինը՝ ներառյալ սոցիալական ապահովության վճարները՝ 11.9 տոկոս:

ՀՀ պետական բյուջեի ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը 2010 թվականի արդյունքներով նախորդ տարվա նկատմամբ դրսևորել է նվազման միտում՝ 2.3 տոկոսային կետի չափով և կազմել 27.3 տոկոս: ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտը 2010 թվականին կազմել է ՀՆԱ-ի 5 տոկոսը, նախորդ տարվա 7.6 տոկոսի դիմաց:


2011 թվականի հունվար-հուլիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների գծով արձանագրվել է 9.9 տոկոս, իսկ հարկային եկամուտների մասով (ներառյալ պարտադիր սոցիալական ապահովության վճարները)՝ 10 տոկոս աճ:

ՀՀ պետական բյուջեի ծախսերը 2011 թվականի հունվար-հուլիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել են 6.3 տոկոսով, որից ընթացիկ ծախսերի գծով՝ 6.3, իսկ կապիտալ ծախսերի գծով՝ 7.8 տոկոս:

2010 և 2011 թվականներին պետական հատվածի քաղաքականության հիմնական ուղղությունը եղել և մնում է արդյունավետ պարտքի կառավարման և պետական բյուջեի պակասուրդի աստիճանական կրճատման ապահովումը: 2009 թվականին իրականացված հնարավորինս ընդլայնող հարկաբյուջետային քաղաքականության դիմաց հետագա տարիներին իրականացվում է զսպող հարկաբյուջետային քաղաքականություն, որը պետք է հակակշռվի առավելապես ընդլայնող դրամավարկային քաղաքականությամբ:

Գծապատկեր 3.7.1. Հարկաբյուջետային ազդակը²² 2008-2012 թվականներին

22 Հարկաբյուջեի նույն տարիների քաղաքականության ազդակը նույն նամբրի շաբաթվա պահանջարկի վրա գնահատելու համար օգտագործվել է հարկաբյուջեի ազդակի ցուցանիշը, որը բյուջեի եկամուտների ազդակի և ծախսերի ազդակի հանրագումարն է:



Կանխատեսում: Մակրոտնտեսական քաղաքականության համատեքստում հարկաբյուջետային, հետևաբար և մակրոտնտեսական կայունության ապահովման տեսանկյունից ՀՀ կառավարությունը որդեգրել է «ելքի ռազմավարություն», որը ենթադրում է բյուջեի պակասուրդի մակարդակի սահուն իջեցում:

2012 թվականի հարկաբյուջետային քաղաքականության կանխատեսումները հիմնված են հետևյալ սկզբունքների վրա՝ ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների բարելավում՝ ապահովելով 20.7 տոկոս մակարդակ (ներառյալ պարտադիր սոցիալական ապահովության վճարները) և 2012 թվականի պետական բյուջեի պակասուրդի մակարդակի ապահովում 3.1 տոկոսի մակարդակում:

3.8 Կանխատեսումների արդյունքում կատարված ենթադրություններ և ռիսկեր

3.8.1 Ենթադրությունները, որոնք ընկած են տնտեսական կանխատեսումների հիմքում

- Հայաստանը, համարվելով փոքր և բաց տնտեսություն ունեցող երկիր, շատ արագ է արձագանքում համաշխարհային տնտեսական զարգացումներին: ԱՄՀ-ի «Համաշխարհային Տնտեսական Հեռանկարներ»²³ պարբերականի կանխատեսումների համաձայն Համաշխարհային տնտեսությունում 2012թ-ին ակնկալվում է աճի տեմպի պահպանում 4.0 տոկոսի շրջանակներում, թեև որոշակի մտահոգություններ կապված զարգացած երկրների հարկաբյուջետային քաղաքականությունների անհրաժեշտ ճշգրտումների հետ դեռևս պահպանվում են: Այս համատեքստում Հայաստանի հիմնական գործընկեր երկրներից Ռուսաս-

²³ Մանրամասն տես ԱՄՀ՝ «World Economic Outlook» September 2011

տանի և Եվրամիության երկրների տնտեսական աճերի տեմպերն ակնկալվում է, որ ևս 2012թ-ին 2011թ-ի համեմատ կդանդաղեն:

- Ռուսատանում, որը մեր երկրի տնտեսության համար կարևոր գործընկեր է թե արտահանման թե տրանսֆերտների տեսանկյունից, տնտեսական աճի տեմպի դանդաղումը մեր երկիր հոսող մասնավոր տրանսֆերտների աճի տեմպերը կդանդաղեցնի:

- Գործընկեր երկրներում տնտեսական աճի տեմպերի որոշակի դանդաղումը, կհանգեցնի մեր երկրից արտահանման աճի տեմպերի որոշ չափով դանդաղման:

- Համաշխարհային շուկաներում ակնկալվում է, որ հումքային ապրանքների գները կկայունան արդեն իսկ արձանագրված միտումներին համապատասխան, ինչը կնշանակի, որ տարեկան հաշվով 2012թ-ի գների միջին մակարդակն ավելի ցածր կլինի 2011թ-ի գների միջին մակարդակից:

- Նախորդ տարիներին կառավարության հակաճգնաժամային միջոցառումների ներքո ներքին տնտեսություն ներարկված մեծածավալ միջոցները, ֆինանսական շուկայի միջնորդության մեծացումը և տնտեսական դաշտում տնտեսվարող սուբյեկտների գործունեության հեշտացմանն և պարզեցմանն ուղղված բազմաթիվ միջոցառումները լազային էֆեկտով (որոշ ժամանակ հետո) դրական ազդեցություն կունենան տնտեսական դաշտի աշխուժացման վրա: Ակնկալվում է, որ 2012 թվականի տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժ են լինելու արդյունաբերությունը և ծառայությունների ոլորտը:

- Կապված կառավարության կողմից արտահանման ուղղվածություն ունեցող ձեռնարկությունների օժանդակման գործընթացի հետ արտահանման աճը ակնկալվում է, որ կշարունակի լինել առաջանցիկ ներմուծման աճի նկատմամբ, որով էլ կայայնանավորվի 2012 թվականի արտաքին առևտրի զարգացումները՝ բարելավելով ընթացիկ հաշիվ/ՀՆԱ ցուցանիշը:

- Հարկաթյուջետային քաղաքականությունն ուղղված է լինելու ինչպես հարկային բեռի, այնպես էլ առանց հարկային բեռի բարձրացմամբ հարկային մուտքերի ավելացմանը, (վարչարարության և քաղաքականության հաշվին), իսկ ծախսային մասով գերակայություն է շարունակելու մնալ սոցիալական ծախսերի մակարդակի պահպանումը:

- Դրամավարկային քաղաքականությունը կհետևի գնաճի նպատակադրման ներքո իր 4 +/- 1.5 տոկոս թիրախի ապահովմանը, իսկ վերջինիս գծով թե արտաքին միջավայրը և թե ներքին միջավայրն ակնկալվում է, որ բարենպաստ կլինեն և գնաճի արագացման ռիսկեր չեն պարունակի:

3.8.2 Կանխատեսումներում առկա ռիսկերը

Կանխաստեսման առկա ռիսկերը պայմանավորվում են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին տնտեսական գործոններով, ընդ որում 2012թ-ի համար ռիսկերն ավելի շատ տնտեսական աճի բազային սցենարից ներքև գտնվելու ուղղությամբ են:

Միաժամանակ, Հայաստանը լինելով փոքր և բաց տնտեսություն արագ է արձագանքում գործընկեր երկրների տնտեսական զարգացումներին: Այդ կապակցությամբ հիմնական կանխատեսումների ռիսկերը մեծապես պայմանավորված կլինեն համաշխարհային տնտեսությունում տիրող իրավիճակով.

Արտաքին միջավայր

- Միջազգային հեղինակավոր կանխատեսող կազմակերպությունների կողմից 2011 թվականի ընթացքում համաշխարհային տնտեսության աճի կանխատեսումները ճշգրտվել են դեպի ներքև²⁴: իսկ այսօրվա սպասումները առաջիկա տարվա համար կանխատեսվածից էլ ցածր է գանահատվում, ինչը պայմանավորված է հիմնականում զարգացած երկրների տնտեսությունների նկատմամբ շուկաների և ներդրողների վատատեսական սպասումներով: Ընդ որում Եվրոպական 5 երկրների (Հունաստան, Իսպանիա, Իռլանդիա, Իտալիա, Պորտուգալիա) ԱՄՆ-ի, Ճապոնիայի հարկաբյուջետային քաղաքականությունների խնդիրների չլուծման ձգձգումների հետևանքները Համաշխարհային տնտեսության վրա կարող են ունենալ երկարաժամկետ բնույթ:

- Եթե նավթի ու գազի գները ներդրողների վատատեսական սպասումներով և վառելիքի նկատմամբ ավելի թույլ պահանջարկով պայմանավորված շարունակեն անկում ապրել²⁵ ապա դա իր ազդեցությունը կթողնի Ռուսաստանի տնտեսության վրա: Իսկ դրա արդյունքում դեպի Հայաստան ներհոսող տրանսֆերտները, գործոնային եկամուտները և կապիտալ ներդրումները կկճատվեն՝ հանգեցնելով նաև ՀՆԱ աճի կանխատեսվածից ավելի ցածր մակարդակի ձևավորմանը:

- Եթե Եվրոպական երկրներում պետական պարտավորությունների կատարման դժվարությունները խորանա, ապա դա կանդրադարձնա Հայաստանի գործընկեր երկրների տնտեսական իրավիճակի վրա և Հայաստանի տնտեսությունը կարող է կորուստներ կրել՝ գործընկեր երկրների պահանջարկի անկամանը համապատասխան ունենալով արտահանման աճի տեմպերի դանդաղում, իսկ վերջինս էլ կզսպի Հայաստանի ՀՆԱ աճի տեմպերը:

²⁴ ԱՄՆ-ի կոնդիցցիոնալ ապարակվող «Համաշխարհային և Տնտեսական Հեռանկարներ» պարբերականի սեպտեմբերի թողարկման մեջ ԱՄՆ-ն նախորդ` հունիսի ամսվա կանխատեսումներին համեմատելից եցրել է աշխարհի գրեթե բոլոր տարածաշրջանների 2012թ-ի տնտեսական աճի կանխատեսումները` ընդհանուր առմամբ համաշխարհային տնտեսության տնտեսական աճը 0.5 տոկոսով, Ջարգացած երկրներինը 0.7 տոկոսով և Ջարգացող երկրներինը 0.3 տոկոսով:

²⁵ Հիշեցնենք, որ 2012թ-ի մակրոտնտեսական կանխատեսումներին բազային սցենարում էլ զրկված է այն ենթադրությունը, որ վատելիքի համաշխարհային գներին երկարակարգ ազդեցությունները 2012թ-ի ընթացքում կկայունանան:

• Եթե մետաղների գները 2012թ-ի ընթացքում միջին հաշվով ավելի ցածր մակարդակ գրանցեն քան կանխատեսվում է (կապված թե Ասիական երկրների սպասվածից ավելի քիչ տնտեսական աճով, թե Եվրոպայի ու ԱՄՆ-ի տնտեսությունների սպասվածից ավելի թույլ պահանջարկի ձևավորումով), ապա վերջինս կհանգեցնի Հայաստանի մետաղների արտահանման թուլացման՝ հետևաբար և ՀՆԱ-ի աճի տեմպերի դանդաղման:

• Եթե պարտքի խնդիրներ ունեցող երկրներից մեկը, օրինակ Հունաստանը պարտքի դեֆոլտ արձանագրի (միաժամանակ գտնվելով նաև Եվրոգոտում) ապա կարող է դա վարակի էֆեկտով տարածվել պարտքի խնդիրներ ունեցող մյուս երկրների վրա, քանի որ նշյալ երկրների պարտքային արժեթղթերի սեփականատերերը կարող է խուճապի մեջ ընկնեն, ինչի հետևանքով թե կորպորատիվ շուկաները և թե հումքային շուկաները ավելի կտրուկ անկումներ կարձանագրեն, քան վերը նշված դեպքերում ռիսկերի իրագործման ժամանակ: Այս պարագայում համաշխարհային տնտեսությունը ավելի արագ ստագնացիայի մեջ կհայտնվի, իսկ Հայաստանի տնտեսությունը վերջինիս համապատասխան ևս ավելի ուժեղ բացասական ազդեցություններ կներմուծի տնտեսություն՝ արդյունքում գրանցելով ավելի մեծ ՀՆԱ-ի կորուստներ, քան մնացած բոլոր դեպքերում:

Ներքին միջավայր

• Եթե հաջորդ տարին ևս բնութագրվի ներդրումային պասիվությամբ և դրա հետևանքով արձանագրվի շինարարության ոլորտի աճի տեմպի կանխատեսվածից ցածր մակարդակ, ապա դա իր բացասական ազդեցությունը կունենա տնտեսության մյուս ճյուղերի երկարաժամկետ զարգացման, հետևաբար երկրի երկարաժամկետ տնտեսական աճի վրա:

• Կառավարությունը պետք է շարունակաբար իրականացնի տնտեսական բարեփոխումներ՝ հատկապես գործարար միջավայրի և հարկային վարչարարության բարելավման ուղղությամբ, սակայն եթե տնտեսվարողների սպասումները տնտեսական միջավայրի դրական զարգացումների նկատմամբ ավելի վատատեսական լինեն, ապա տնտեսական աճը կլինի կանխատեսվածից ցածր:

• Եթե ներքին տնտեսությունում տնտեսվարողների գնաձային սպասումները ձևավորվեն ոչ թե կանխատեսված նվազման ուղղությամբ, այլ արտաքին միջավայրի անորոշություններով պայմանավորված ունենան աճի միտում, ապա կարող են գնաձային լրացուցիչ ճնշումներ առաջանալ ստիպելով ԿԲ-ին գնալ կոշտացումների: Իսկ դրա արդյունքում փողի ազդեգատների ավելի ցածր աճի տեմպեր կարձանագրվի՝ հանգեցնելով տնտեսական աճի տեմպերի դանդաղման:

Պետք է նշել, որ այս ռիսկերի նյութականացման դեպքում բյուջեի կատարման վրա էական ճնշումներ կգրանցվեն, քանի որ կանխատեսվածից ցածր ՀՆԱ-ի ձևավորումը նշա-

նակում է սպասվածից ցածր հարկային մուտքեր: Ընդ որում ՀՆԱ-ի կանխատեսվածից ցածր մակարդակի ձևավորման չափը կախված կլինի, ինչպես այն բանից թե վերը նշված ռիսկերից որոնք կիրականանան, այնպես էլ դրանց դրսևորման չափից: Սակայն գլոբալ կարելի է բաժանել դրանք երկու խմբի՝

1. Ռիսկեր, որոնց նյութականացման դեպքում Հայաստանի տնտեսական աճի տեմպի դանդաղումը կլինի համեստ՝ 1.5-2.5 տոկոս

2. Ռիսկեր, որոնց նյութականացման դեպքում Հայաստանի տնտեսական աճի տեմպերն էապես կնվազեն՝ առնվազն 3.0-4.5 տոկոս:

Կառավարության գործողությունները նշյալ խումբ ռիսկերի հրազորման դեպքում կլինեն թե լրացուցիչ ֆինանսավորման միջոցների ներգրավումը՝ չխախտելով պարտքի կայունության սկզբունքները²⁶ և թե որոշ բյուջետային ծախսերի կատարման կասեցումը՝ ապահովելով սոցիալական բնույթի ընթացիկ ծախսերի լիարժեք կատարում:

Հավելված. Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ

Ցուցանիշներ	2008	2009	2010	2011	2012
	փաստ.	փաստ.	փաստ.	սպասում	կանխ.
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	3568.2	3141.7	3501.6	3870.8	4218.6
Իրական ՀՆԱ ինդեքս	106.9	85.9	102.1	104.6	104.2
ՀՆԱ դեֆլյատոր	105.9	102.6	109.2	105.7	104.6
Սպառողական գների ինդեքս (ժամկետի վերջ)	105.2	106.5	109.4	104.6	104.1
Գնաձ (ժամանակաշրջանի վերջ) %	5.2	6.5	9.4	4.6	4.1
Գնաձ (միջին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ) %	9.0	3.4	8.2	7.7	4.5
ՀՆԱ իրական աճն ըստ ճյուղերի ավելացված արժեքների՝					
ՀՆԱ	6.9	-14.1	2.1	4.6	4.2
Արդյունաբերություն	2.1	-6.9	10.5	11.5	7.5
Գյուղատնտեսություն	3.3	6.0	-15.7	9.2	4.0
Շինարարություն	11.3	-41.6	3.0	-4.0	2.5
Ծառայություններ	4.8	-3.3	4.5	4.0	3.5
Զուտ հարկեր	17.1	-22.5	9.2	3.3	4.0
ՀՆԱ ծախսային կոմպոնենտների իրական աճերը					
Վերջնական սպառում	4.5	-4.0	4.0	1.3	2.6
Պետական	-1.9	-1.2	5.3	0.2	-3.9
Մասնավոր	5.4	-4.4	3.7	1.5	3.6
Կապիտալի համախառն կուտակում	12.6	-30.9	2.9	0	0.4

²⁶ Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության և Համաշխարհային բանկի համատեղ կատարած վերլուծության ներքին արդյունքների, Հայաստանը, չնայած 2009թ-ի պարտքի ծավալներին կտրուկ աճի, դեռևս ունի նոր պարտք վերցնելու հնարավորություններ առանց խախտելու պարտքի կայունության սահմանային պիեդը:

Ցուցանիշներ	2008	2009	2010	2011	2012
	փաստ.	փաստ.	փաստ.	սպասում	կանխ.
Պետական	-16.9	11.5	-16.8	-17.0	-12.2
Մասնավոր	19.1	-37.4	8.3	3.6	2.5
Ապրանքների և ծառայությունների արտահանում	-13.1	-10.4	26.5	13.7	12.2
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	7.3	-19.2	12.8	-0.4	4.8
Արտաքին հատված					
Մլն. ԱՄՆ դոլար					
Ապրանքների և ծառայությունների արտահանում	1757	1338	1937	2342	2629
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	-4748	-3688	-4212	-4580	-4802
Ապրանքների արտահանում	1112	749	1175	1505	1708
Ապրանքների ներմուծում	-3776	-2830	-3208	-3529	-3712
Ապրանքների արտահանման աճ, %	-7.1	-32.7	57.0	28.0	13.5
Ապրանքների ներմուծման աճ, %	35.0	-25.0	13.4	10.0	5.2
Ընթացիկ հաշիվ	-1382	-1369	-1373	-1158	-1119
Կապիտալի և ֆինանսական հաշիվ	1147	1551	1177	1141	1049
Արտաքին պարտք	1577	2967	3299	3805	4109
ՀՆԱ-ի նկատմամբ տոկոս					
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-25.6	-27.2	-24.3	-21.4	-19.1
Ապրանքների և ծառայությունների արտահանում	15.1	15.5	20.7	22.4	23.1
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	40.7	42.6	44.9	43.8	42.1
Առևտրային հաշիվ	-22.8	-24.1	-21.7	-19.4	-17.6
Ընթացիկ հաշիվ (ներառյալ պաշտոնական տրանսֆերտները)	-11.8	-15.8	-14.7	-11.1	-9.8
Ընթացիկ հաշիվ (առանց պաշտոնական տրանսֆերտների)	-12.5	-16.8	-15.6	-12.5	-10.2
Արտաքին պարտք	13.5	34.3	35.2	36.4	36.1
Ներմուծման ծածկույթը (ամիսներով)	3.6	6.5	5.3	4.9	4.5
Դրամավարկային հատված²⁷					
Փողի զանգվածի աճ % (M2X ժամ. վերջ)	2.3	15.1	11.8	15.1	10.5
Փողի զանգվածի շրջապտույտի արագություն (ՀՆԱ/M2X միջին)	5.1	3.9	4.0	3.9	3.8
Փողի բազմարկիչ (M2X)	1.6	1.6	1.6 ²⁸	1.8	1.8
Դրամային զանգվածի աճ % (M2 ժամ. վերջ)	-4.2	-16.2	15.7	17.4	13.0
Դրամային զանգվածի շրջապտույտի արագություն (ՀՆԱ/M2 միջին)	6.5	7.2	6.9	6.8	6.5
Դրամային բազմարկիչ (M2)	1.3	1.2	1.3	1.3	1.3

²⁷ Փողի զանգվածի և բազայի միջինները հաշվարկված են տարեկան տվյալներին հիման վրա և այդ իսկ պատճառով կարող են տարբերվել ՀՀ ԿԲ-ի տվյալներին (ՀՀ ԿԲ-ը միջինները հաշվարկում է եռամսյակային տվյալներին հիման վրա):

²⁸ Փողի բազմարկիչը 2010 թվականին կազմել է 1.8:

Ցուցանիշներ	2008	2009	2010	2011	2012
	վաստ.	վաստ.	վաստ.	սպասում	կանխ.
Փողի բազա, % (ժամ. վերջ)	5.3	13.8	-0.8	16.2	5.1